ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/113

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.07.2018թ. թիվ 03/26-3/13298-18 գրությամբ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 19.07.2018թ. 04/31.2/9175-18 գրության հիման վրա, 20.07.2018թ. թիվ 03/26-3/13298-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/113 ընթացակարգի շրջանակներում 26.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով նշել է, որ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը մարել է ունեցած պարտավորությունները և հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Մասնակիցը չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն և որպես ապացույց ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է համապատասխան վճարը կատարած լինելու փաստը հավաստող անդորրագիրը:

3. **<u>ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 19.07.2018թ. 04/31.2/9175-18 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի կողմից 12.07.2018թ. «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով կազմակերպված բրալյան համակարգով գրելու համար տետրերի գնման գործընթացին 11.07.2018թ. հայտ է ներկայացրել «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը և ճանաչվել առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետը, վերջինիս հայտը ներկաայցնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե 13.07.2018թ. ներկայացվել է համապատասխան հարցում: Հարցման արդյունքում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.07.2018թ. ստացված եզրակացությամբ պարզվել է, որ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/113 ընթացակարգի շրջանակներում 26.07.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ ԿԳՆ կարիքների համար բրայլյան համակարգով գրելու համար տետրերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով 11.07.2018թ. հայտ է ներկայացրել «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը:

2. Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6.1 կետով կայացված որոշմամբ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 12 814 ՀՀ դրամի չափով:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.07.2018թ. թիվ 03/26-3/13298-18 գրությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 19.07.2018թ. 04/31.2/9175-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց

հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն

կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի

կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ՀՀ ԿԳՆ կարիքների համար բրայլյան համակարգով գրելու համար տետրերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***11.07.2018թ.*** հայտ է ներկայացրել «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը:

Մասնակիցը հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.07.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6.1 կետով կայացված որոշմամբ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 13.07.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 17.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 12 814 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.07.2018թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Մասնակցի հայտը մերժվել է:

«Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է 11.07.2018թ. թիվ 180711060064044 անդորրագիրը, որի համաձայն Մասնակիցը ***11.07.2018թ.*** ՀՀ կենտրոնական գանձապետարանի «900008000490» հարկերի միասնական հաշվին կատարել է 13 000 ՀՀ դրամի վճարում:

Մասնակիցը ներկայացրել է նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 25.07.2018թ. տրված թիվ 2289 տեղեկանքը, համաձայն որի «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը 12.07.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Այսպիսով, ուսումնասիրելով «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամի կողմից ներկայացված 11.07.2018թ. թիվ 180711060064044 անդորրագիրը, արձանագրում եմ, որ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը ***«ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով ընթացակարգին հայտը ներկայացնելու օրը՝ 11.07.2018թ., հարկերի միասնական հաշվին կատարել է 13 000 ՀՀ դրամի վճարում:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 17.07.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 12 814 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը: Միևնույն ժամանակ ուսումնասիրելով Մասնակցի կողմից ներկայացված 11.07.2018թ. թիվ 180711060064044 անդորրագիրը, գտնում եմ, որ այնուամենայնիվ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամը «ՀՀԿԳՆԳՀԱՊՁԲ-18/13» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չի խախտել

ստանձնած պարտավորություն, քանի որ նշված անդորրագրի համաձայն Մասնակիցը հայտը ներկայացնելու օրը կատարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած իր հարկային պարտավորությունները՝ կատարելով համապատասխան չափի վճարում:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացված 11.07.2018թ. թիվ 180711060064044 անդորրագիրը, գտնում եմ, որ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.07.2018թ. թիվ 03/26-3/13298-18 գրությամբ՝ «Մանկան Աչքեր» բարեգործական հիմնադրամին (ՀՎՀՀ՝ 00103363) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**